

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА**

Հումանիտար գիտություններ № 2 (19) 2013 Гуманитарные науки

**ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
ԱՆԶԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ա. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

***Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան***

Ժամանակակից հասարակարգում անձի հիմնախնդիրը իրավացիորեն կարևոր տեղ է զբաղեցնում: Ներկայիս հոգեբանական գիտության կարևոր խնդիրներից է հարմարվող, ինքնազարգացած անհատի ձևավորումը:

Այս հարցի գիտական ուսումնասիրման կարևորությունը պայմանավորված է անձի բազմակողմանի ուսումնասիրմամբ:

Իր զարգացման ընթացքում անձը ենթարկվում է տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների ազդեցությանը, որի հետևանքով առաջացած ֆրոստրացիոն և պրետային իրավիճակներից դուրս գալու համար դիմում է պաշտպանական մեխանիզմների օգնությանը:

Պաշտպանական մեխանիզմներ հասկացության մասին գաղափար տվեց ավստրիացի գիտնական Զ.Ֆրեյդը, 1894թ.-ին, հոգեվերլուծական ուսմունքում՝ «պաշտպանական նեյրոպսիխոզ» անվան տակ: Անգլիական հոգեկան երևույթների՝ պաշտպանական մեխանիզմների հայտնագործումը թույլ տվեց հասկանալ, որ մարդու հոգեկան գործունեությունը կարող է ընթանալ և՛ գիտակցական, և՛ անգիտակցի մակարդակներում: Հեղաշրջող մեծ նշանակություն ունեցավ այն հետևությունը, որ կան այնպիսի հոգեկան գործը ուժեր, որոնք լուրջ ազդեցություն են թողնում մարդու վարքի վրա, բայց և մնում են չգիտակցված [1]:

Պաշտպանական մեխանիզմները բնագոյների և աֆեկտների կառավարման հիմնական եղանակներն (մեթոդները) են: Դրանք գործում են անգիտակցի ոլորտում, տարբերվում են միմյանցից, դինամիկ են և հակադարձելի: Պաշտպանական մեխանիզմները կարող են լինել ինչպես ադապտիվ, այնպես էլ ախտաբանական [1]:

Առաջին անգամ մանրամասն նկարագրվեց պաշտպանական մեխանիզմների գործառական նշանակությունը, նրա նպատակը, առաջացման պատճառները, օբյեկտը, տեսակները: Պաշտպանական մեխանիզմները դիտարկվեց որպես հոգեկան անգիտակից պրոցեսների յուրահաստուկ մի ամբողջություն, որն ուղղված է նվազեցնելու տագնապները, և որի օգնությամբ անհատը ձգտում է պահպանել Ես-ի ամբողջականությունը և հարմարվողականությունը [2]:

Հոգեբանական պաշտպանություն հասկացությունը դասական տեսքով ներկայացրել է Ա.Ֆրեյդը: Նա համակարգեց պաշտպանական մեխանիզմների գործառույթներն ու դրդապատճառները, ուսումնասիրեց մանկական պաշտպանական մեխանիզմները [3]:

Պաշտպանական մեխանիզմների գաղափարը, ձևավորվելով հոգեվերլուծության շրջանակներում, հետագայում լայն տարածում ստացավ տարբեր հոգեբանական ուղղություններում:

Բ.Բասինը և մի շարք հետազոտողներ հոգեբանական պաշտպանությունը համարում են «նորմալ» մեր առօրյա կյանքում հաճախ հանդիպող նախագգուշական պաշտպանական մեխանիզմներ [4,7,13,17]: Նա կարևորում է նաև պաշտպանական մեխանիզմների դերը՝ հոգեկան լարվածությունների առաջացումը կանխելու, ինչպես նաև մարդկանց վաղը կարգավորելու առումով [4,5]:

Հոգեբանական պաշտպանությունը դիտվում է որպես Ես-ի հավասարակշռությունն ու ներդաշնակությունը ապահովող պաշտպանական մեխանիզմների գործողությունների և մեթոդների մի ամբողջություն, որն ուղղված է նվազեցնելու կամ վերացնելու անհատի ամբողջականությանն ու կայունությանը սպառնացող պատճառները:

Պաշտպանական մեխանիզմ հասկացությունը բնութագրվում է որպես գործողությունների մի ամբողջություն, որը նվազեցնում կամ վերացնում է այն փոփոխությունները, որոնք կարող են վնաս պատճառել անհատի կայունությանն ու ամբողջականությանը, հավասարակշռությանը:

Պաշտպանական մեխանիզմները կոչված են մարդուն ազատելու բացասական ազդեցություններից՝ տագնապից, կոնֆլիկտներից, ինքնազնահատականի իջեցումից, թերաթեքության զգացումից, այլ բացասական ազդեցություններից [13]:

Բերված սահմանումներից ամենից առաջ կարելի է նկատել հետևյալը. պաշտպանական մեխանիզմները դիտվում են անհատի բնույթի անբաժանելի առանձնահատկություն և որպես առանձին, ինքնուրույն գործընթաց կամ մեխանիզմ հանդես չեն գալիս:

Ամփոփելով նշված սահմանումները՝ կարող ենք ընդհանրացնել պաշտպանական մեխանիզմների հետևյալ առանձնահատկությունները.

1. գործում են կոնֆլիկտային և սթրեսային իրավիճակներում,

2. դրանց առկայությունը կանխում կամ նվազեցնում է հոգեկան լարվածությունները:

Նկատում ենք, որ բնութագրված սահմանումների հիմնական մտքի կառուցվածքը համընկնում է հոգեվերլուծության Ջ.Ֆրեյդի այն տեսության հետ, ըստ որի՝ հոգեկան պաշտպանությունը դիտվում է որպես կոնֆլիկտային իրավիճակներում գործող մեխանիզմներ, որոնք ուղղված են նվազեցնելու տագնապի զգացումը:

Նշված սահմանումներում տարբեր են, թերևս, պաշտպանական մեխանիզմները գործունեության մեջ դնող կոնֆլիկտային իրավիճակներ ծնող պատճառները:

Հոգեբանները պաշտպանական մեխանիզմները դիտում են որպես կոնֆլիկտային իրավիճակների արդյունք: Սակայն տարբեր են մոտեցումները կոնֆլիկտային իրավիճակներ առաջացնող պատճառների մասին, որոնք հիմք են հանդիսանում պաշտպանական մեխանիզմների գործունեության համար:

Ի տարբերություն Ջ.Ֆրեյդի [2], ով ներքին կոնֆլիկտի հիմքը համարում է Ես-ի, Գեր ես-ի և Այն-ի հակադրությունը, Կ.Յունգը ներքին կոնֆլիկտի հիմքը համարում է անհատի և արտաքին միջավայրի պահանջմունքների անհամապատասխանությունը [11,12]:

Հոգեվերլուծության մեջ պաշտպանական մեխանիզմները դիտվում են որպես անձի զարգացման գործոն, տագնապի վերացման միջոց: Այն պարտադիր նախապայման է կոնֆլիկտային իրավիճակներում ներգրծների առաջացումից խուսափելու համար: Հումանիստական հոգեբանության մեջ, պաշտպանական մեխանիզմները դիտվում են որպես անձնային աճը արգելակող գործոն, ներքին արգելք անհատի ճիշտ աշխարհընկալման գործընթացում, ինչպես նաև իրավիճակի ռեալ տիրապետման համար:

Այսպիսով, պաշտպանական մեխանիզմները գործում են կոնֆլիկտային իրավիճակներում, ունեն կոնկրետ մոտիվացիա, ուղղված են որոշակի նպատակի և օբյեկտի, ունեն ներգործման միջոցներ, նաև տարբեր գործառույթային ձևեր:

1. մեղմացնում են անհաջողության թողած տպավորությունը և նրա պատճառած տառապալից ապրումները,

2. վերացնում են ֆրուստրացիայից և սթրեսներից առաջացած տագնապն ու վախը,

3. պահպանում են անձի արժեքավորությունն ու կայունությունը,

4. պաշտպանում են նրան ոչ ցանկալի կամ հիվանդագին զգացումների գիտակցումից:

Պաշտպանական մեխանիզմները , որ կոչված են կայունացնելու անհատի հոգեկանը, երբեմն կարող են թողնել դեստրուկտիվ ազդեցություն՝ խաթարելով անձի առողջական և հոգեկան գործընթացները /փոխվում է բնավորությունը, դժվար են հարմարվում շրջապատին/:

Բ.Զեյգարնիկը առանձնացնում է պաշտպանական մեխանիզմների դրական և բացասական կողմերը: Նա ուսումնասիրել է պաշտպանական մեխանիզմների դեստրուկտիվ և կոնստրուկտիվ դրսևորումները՝ ընդգծելով, որ առաջիններն ունեն չգիտակցված բնույթ, իսկ կոնստրուկտիվ դրսևորումները գիտակցված են և ունեն կարգավորող դեր: Կ.Ռոջերսը կոնստրուկտիվ պաշտպանական մեխանիզմների ձևավորումը կապում է անձի զարգացման որակների և սեփական ուժի հետ, որոնք ուժեղ Ես-ի բաղադրիչներն են: Զգիտակցված պաշտպանական մեխանիզմները երբեմն խախտում են այն ներդաշնակ կապը (դեստրուկտիվ քայլեր), որ գոյություն ունի վարքի նպատակի և իրավիճակով պայմանավորվող վարքի միջև: Անձը դիմում է պաշտպանական մեխանիզմների օգնությանը, երբ գիտակցված նպատակին հասնելու ճանապարհին հանդիպում է դժվարությունների, կամ երբ վտանգի տակ են դրվում նրա անձնային որակները: Այսպիսի փոխհատուցվող գործողությունների են դիմում օրինակ՝ ծանր հիվանդները, որոնք իրենցից հեռու են վանում հիվանդության գիտակցումը [6]: Ախտաբանական նշանները ցույց են տալիս, որ ներդոները և շատ սոմատիկ հիվանդություններ չգիտակցված պաշտպանական մեխանիզմներ են: Զգիտակցված և ոչ կոնստրուկտիվ պաշտպանական մեխանիզմներից օգտվում են ֆրոստրացիոն իրավիճակում գտնվող առողջ մարդիկ: Այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են նեգատիվիզմը և աուտիզմը, հաճախ դառնում են արդեն խանգարված շփման քողարկման միջոց:

Պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը իր արտացոլումը գտավ մի շարք հեղինակների՝ պթեաներին վերաբերող հետազոտություններում [8,9,15,16]: Ղեկավարվելով հոմեոստազի սկզբունքներով, Հ.Սելյեն սովեց պաշտպանական մեխանիզմների ռեակցիայի էներգետիկ համակարգի նոր հոգեֆիզիոլոգիական հիմնավորում [16]: Նա փորձել է ընդհանրացնել պթեստերին տրվող պատասխանների պատկերը և առաջարկել է մի մոդել, որն անվանել է «Ընդհանուր ադապտացիայի սինդրոմ»: Այս մոդելը ցույց է տալիս, թե օրգանիզմն ինչպիսի հակազդումներ է դրսևորում, երբ փորձում է հարմարվել իր վրա ազդող պթեսային գործոններին:

Սթրեսներին վերաբերող հետազա հետազոտություններում պաշտպանական մեխանիզմները, որպես կանոն, հակադրվում են

հոգեբանական հիմնական հասկացության՝ տիրապետման մեխանիզմներին: Ներկայումս հոգեբանները բնորոշում են անգիտակցական մեխանիզմների գիտակցական տարբերակը: Տ.Կոկսը առանձնացրել է սթրեսային իրավիճակները հարթող միայն երեք պաշտպանական մեխանիզմներ՝ փոխակերպում, ժխտում, ինտելեկտուալիզացիա:[9]

Պաշտպանական մեխանիզմների ցանկը բազմազան է, անհատապես ուրույն: Հետազոտող հեղինակների մոտ բացակայում է ընդհանուր կարծիքն այն մասին, թե քանի պաշտպանական մեխանիզմ գոյություն ունի: Հոգեբանական պաշտպանության տեսակներից յուրաքանչյուրը՝ արտամղումը, ռացիոնալիզացիան, ժխտման մեխանիզմը, ռեգրեսիան, պրոյեկցիան, ճնշումը, սուբլիմացիան, մեկուսացումը, միմյանցից տարբերվում են իրենց գործառույթներով, խնդրի լուծումներով, պատճառած հետևանքներով: Բոլորը՝ բացառությամբ սուբլիմացիայի, մեկուսացում են բնագոյային պահանջմունքների անմիջական արտահայտումը:

Այսպիսով՝ պաշտպանական մեխանիզմները թույլ են տալիս բացառել, վերաիմաստավորել, ապակողմնորոշել. ժխտել իրականությունը՝ դրանով իսկ նպաստելով իրականության ոչ ճիշտ ընկալմանը: Յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է էներգիա, որը պահպանում է պաշտպանական մեխանիզմը՝ անուղղակի կերպով սահմանափակելով Ես-ի ուժն ու ձկունությունը:

Ներկայումս հոգեբանական գիտության մեջ ընդունում են, որ պաշտպանական մեխանիզմները, կախված իրենց գործունեության ձևից, կարելի է դասակարգել առաջնային և երկրորդային մասերի:

1. Առաջնային պաշտպանական մեխանիզմներ՝

Բնորոշեցիա, ժխտում, բացարձակ ժխտում, պրիմիտիվ իդեալականացում, պրոյեկցիա, նույնականացման պրոյեկցիա:

2. Երկրորդային պաշտպանական մեխանիզմներ՝

Փոխանակում, արտամղում, պաշտպանական երևակայություն, մեկուսացում իդեալականացում, իդենտիֆիկացիա, ինտելեկտուալիզացիա, փոխհատուցում, ինքնաազդեհա. ռացիոնալիզացիա, ռեգրեսիա, սուբլիմացիա:

Վերլուծելով հոգեբանական մեխանիզմները ուսումնասիրող գրականությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ ներկայումս բավականաչափ չեն այն փորձերը, որոնք թույլ են տալիս պաշտպանական մեխանիզմների մասին տեսական և էմպիրիկ գիտելիքները դիտելու որպես ամբողջական միասնական ըմբռնում: Դրանցից մեկը «Էգո» մեխանիզմի կառուցվածքային տեսությունն է, որը 1979թ. մշակել են Ռ.Պլուտչիկը և նրա համահեղինակներ Իս.Կելլերմանը,

Խ.Կոնստը: Մեթոդը պարունակում է մի շարք տեսական և էմպիրիկ դրույթներ: Այստեղ փորձ է արվել միացնելու պաշտպանական մեխանիզմների բնույթի հոգեվերլուծական հասկացությունը և թեստերի գնահատման մեխանիզմների չափանիշները: Բացի դրանից, այս բազմանշանակ կոնտեքստը ապահովելու նպատակով ներգրավվել են զգացմունքների կառուցվածքային մոդելի շատ տարրեր: Տեսական համապարփակ մոդելը թույլ է տալիս լուծելու տարիքային և մանկավարժական հոգեբանության գործնական խնդիրներ[18]:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները ընկալում ենք որպես ածանցյալ զգացմունքներ, քանի որ հիմնական պաշտպանություններից յուրաքանչյուրը օնտոգենետիկորեն զարգանում է՝ համապատասխան զգացմունքը հսկելու համար: Օրինակ՝ Ռ. Պլուտչիկի տեսությունը հաստատում է, որ տեղակալման /փոխարինում/ պաշտպանական մեխանիզմը զարգացել է զայրույթի ինքնատիրապետման, ճնշումը՝ տագնապի ինքնատիրապետման, ժխտումը՝ վստահության արտահայտության, իսկ պրոյեկցիան՝ անվստահության արտահայտության համար: Յուրաքանչյուր դեպքում վախը ընդհանուր տարրն է, որը մասնակցում է զգացմունքների կոնֆլիկտներին: Այս մոդելն ունի չափման մի քանի նախադրյալներ: Ենթադրվում է, որ գոյություն ունի ութ հիմնական պաշտպանություն, որոնք սերտորեն կապված են ութ հիմնական զգացմունքների հետ: Հոգեբանական պաշտպանությունները պետք է միմյանց հետ ունենան ուրույն հարաբերություններ՝ նմանություն, տարբերություն[18]:

Ավելին, մեր կարծիքով պաշտպանության առկայությունը պետք է ապահովի ներանձնային կոնֆլիկտի մասնակի /կողմնակի, անուղղակի/ չափման հնարավորությունը, այսինքն՝ չհարմարվող անհատը մեխանիզմներից ավելի շատ պետք է օգտվի, քան ադապտացվող փորձարկվողը:

Պաշտպանական մեխանիզմները հնարավորություն են ընձեռում, որպեսզի անհատը հնարավոր չափով արդյունավետ և առանց ծանր սթրեսների կարողանա հասնել դրական ինքնազարգացման: Հաջող ադապտացիան որոշվում է անհատի այս կամ այն արտահայտված հատկություններով, որոնք ադապտացիոն փուլին տալիս են ուղղվածություն և հոգեբանական արդյունավետություն՝ ազդելով դրանց ընթացքի վրա: Հավասար պայմաններում որոշ անհատներ, ունենալով զարգացման տարբեր աստիճաններ, կարող են դետերմինացնել սոցիալական ուղղվածության վարքի ձևավորման տարբեր արդյունքներ, երբ դա վերաբերում է հատկապես, համեմատաբար կայուն անձնային որակներին[10]: Դրա համար ադապտացիան և հարմարվող վարքը

որակվում են որպես հոգեկան պաշտպանության մակարդակ, որոնք կոչված են անձին պաշտպանելու սպրումների ուժգնությունից:

Պաշտպանական մեխանիզմների մասին հոգեբանների բազմաթիվ ուսումնասիրությունները բացահայտում են մարդկային հոգու նոր հնարավորությունները, անձի կայունացման, ինքնահաստատման առանձնահատկությունները, մշակում են նոր ուղիներ պթեասային և ֆրոստրացիոն իրավիճակների հաղթահարման համար:

Պաշտպանական մեխանիզմների շնորհիվ անձը հնարավորություն ունի խուսափել զգացմունքային սպրումներից՝ կայունացնելով իր վարքը ներհոգեբանական կայունության պայմաններում:

Ադապտատիվ վարքը հակադիր հիմնական միտումների՝ ինքնապահպանման և ինքնազարգացման դիալեկտիկական միասնությունն է, որտեղ առաջինը, ձգտելով կայունության և հավասարակշռության, հարմարվելու միջոցով փորձում է անձին բերել կայուն և անկախ վիճակի, իսկ երկրորդը մղում է ակտիվության՝ փնտրելով զարգացման նոր ուղիներ: Սակայն ակնհայտ է այս հակասական գործընթացի փոխկախվածությունը:

Ինքնապահպանումն ամրացնում է վարքային հակազդումների լուծման արժեքավոր ուղիները՝ ստեղծելով օպտիմալ պայմաններ ինքնազարգացման և ներանձնային ակտիվ փոփոխության համար :

Ամեն դեպքում օգտագործվող պաշտպանական մեխանիզմների բազմազանությունը վկայում է հոգեկանի կարգավորման բարդության և հոգեբանական ռեսուրսների անհրաժեշտության մասին, որպեսզի անհատը գիտակցի, ընդունի և հաղթահարի ֆրոստրացիոն իրավիճակները, ներքին հոգեկան պթեսները: Նեգատիվ իրավիճակներից պաշտպանվելու այս միջոցները անհատին տալիս են ժամանակ ինքն իրեն և շրջապատող աշխարհը վերլուծելու, ինչպես նաև հնարավորություն անհատի հետագա կատարելագործման և ամրապնդման համար: Հակառակ դեպքում մեծ է հավանականությունը, որ ուժեղանան պաշտպանական մեխանիզմների բացասական հետևանքները, որոնք դառնում են խոչընդոտ իր իսկական Ես-ի ճանաչման համար, խանգարում են զգացումների գիտակցական վերլուծությանը և ստեղծում են ներքին կոնֆլիկտները լուծելու պատրանք միայն:

Տեսական վերլուծությունները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ դեստրուկտիվ մեխանիզմների հաղթահարումը իրականացվում է անհատի անձնային աճի զարգացման միջոցով, որը պայմանավորված է հոգեկան արժեքների, ուժեղ Ես-ի և սեփական դերի գիտակցմամբ:

Ուժեղ Ես-ի կարևոր որակներ են վստահությունը աշխարհի նկատմամբ, ինքնուրույնությունը, ինքնատիրապետումը, աշխատասիրությունը, անկախությունը, սեփական Ես-ի գիտակցումը, պատասխանատվությունը, ինքնաընդունման բարձր աստիճանը:

Մեր կարծիքով, պաշտպանական մեխանիզմները թե՛ նորմալ, թե՛ անոմալ զարգացում ունեցող մարդու համար հանդես են գալիս որպես կողմնորոշիչ, խնդիրներին քիչ թե շատ լուծում տալու կամ խուսափելու միջոց: Կարծում ենք, որ եթե մարդը չունի բնածին ակտաբանական խանգարումներ և զարգացման համար ունի քիչ թե շատ բարենպաստ պայմաններ, ապա պաշտպանական մեխանիզմները շատ հաճախ կառուցողական են լինում:

Պաշտպանական մեխանիզմներն ունեն նաև գործնական նշանակություն յուրաքանչյուր անհատի առօրյա կյանքում, քանի որ ընդգրկում են անհատի կենսագործունեության այնպիսի կարևոր ոլորտներ, ինչպիսիք են առողջության պահպանումը, անձնային աճի ձևավորումը, աղապտացիան, որոնք հիմք են հանդիսանում անհատի ինքնազարգացման և ինքնակատարելագործման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆրեյդ Զ., Հոգեվերլուծության ներածություն, Երևան, 2002 էջ 472
2. Фрейд, З., По ту сторону принципа удовольствия./, М., 1992. С.256 - 324.
3. Фрейд А., Психология " Я" и защитные механизмы . М.; Педагогика - Пресс, 1993, С.144
4. Бассин Ф. О силе "Я" и психологической защите /Вопросы философии. -1969. - №2. - С.118-125.
5. Бассин Ф.В., Рожнов В.Е., Рожнова М.А. Фрейдизм: псевдонаучная трактовка психических явлений / Коммунист. - 1972. - № 2. - С.94 - 106.
6. Зейгарник Б.В. Патопсихология.- М.: МГУ 1986. С.287
7. Зейгарник Б.В. Теории личности в зарубежной психологии. - М.: МГУ, 1982. С..128
8. Ильин Г.А. Причины неприятия психоанализа / Бессознательное: природа, функции, методы исследования./ - Тбилиси, 1985, С. 419-428
9. Кокс Т. Стресс. - М.: Медицина, 1980, С 447
10. Ананьев Б.Г. Человек как предмет познания. — Л.: Изд-во Ленингр. ун-та, 1969. — С 339
11. Юнг К.Г.. Проблемы души нашего времени.. М.: Прогресс, 1993, С.132.

12. Юнг К.Г. Психологические типы / Психология индивидуальных различий. Тексты. / Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В.Я. Романова. М., Изд-во Московского университета, 1982. - С. 199-219.
13. Նալչաճյան Ն., Հոգեբանական հիմունքներ ,, Երևան 1997.- էջ 648
14. Налчаджян А.А. Социально-психологическая адаптация личности. - Ереван, 1988.
15. Романова Е.С., Потемкина О.Ф. Графические методы в психологической диагностике. — М., Дидакт, 1992. — С 256 с.
16. Селье Г. Стресс без дистресса. - М., 1979. С 124
17. Соколова Е.Т. Проективные методы исследования личности. - М., МГУ, 1980, С 176
18. Опросник Плутчика Келлермана Конте. /Методика Индекс жизненного стиля (Life Style Index, LSI). /

РЕЗЮМЕ

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ЗАЩИТНЫЕ МЕХАНИЗМЫ В КОНТЕКСТЕ ТЕОРИЙ ЛИЧНОСТИ

А. К. АРУТЮНЯН

В статье проанализированы взгляды психологов о защитных механизмах, предохраняющих личность от эмоциональных переживаний и способствующих разрешению внутриличностных конфликтов. Выявлена их роль и значение для личностного роста. Рассмотрены приспособительные процессы, свойства и качества, которые приобретает личность в процессе своей социализации.

SUMMARY

THE PSYCHOLOGICAL DEFENSE MECHANISMS IN THE THEORETICAL CONTEXT OF THE INDIVIDUAL

A.K. HARUTYUNYAN

The article refers to the human defence mechanisms which are analyzed from different approaches. The author emphasizes its indissoluble role on the person and his mental development, showing its positive and negative sides.